

ինչպէս Գնունցի, Խժրժեցի, Լմեցի, Կոչուած է, նաեւ Ղարազեցի անուանուիլ:

Հայերգ, էջ ԺԱ, կը յիշէ Ա. Վ. Տէվկանց իբրեւ երգիչ «Զաքարիա կաթ. Սոյ Զուղայեցի», որով ապահովապէս կ'ակնարկուի Ազարիա կաթ. († 1602), որուն ինձ ծանօթ երգերն «Ազարիա» կը կրեն վրանին: Թէ Թ. 8—14 տաղերու մէջ ինքն ալ ունի՝ հեղինակութիւն, որոշ բան մը չեմ կրնար ըսել:

Կայ երգիչ մ'ալ Զաքարիա Ագուլեցի որուն անունը գիտեմ միայն Տ. Վ. Պալեանի տողերէս¹. «Զաքարիա Ագուլեցի. ԺԷ. դար: Ասոր մասին առ այժմ կենսագրական ծանօթութիւններ կը պակսին մեզի: Զաքարիա երգած է շատ մը տաղեր ու երգեր: Իր երգած տաղերէն օրինակ մը անցած ըլլալով մեր ձեռքը, կը դնենք այս տեղ»². հրատարակածն է Թ. 8. «Զառածեալ մեղօք եղկելի» տաղն, որ մեր երկու Ձեռագիրներու մէջ լոկ «Զաքարիա», յորջորջումն կը կրէ: Զունենալով ըստ այսմ որոշ ապացոյց, կը հրատարակեմ իբրեւ երկբայական ստորեւ ի շարս Գնունցւոյ տաղերու: Միւսներէն Թ. 10 շատ հաւանական կը թուի ինձ ընծայել Գնունցւոյ, նկատելով որ երգիչն «Ղարիպ», կ'անուանէ ինք զինք³, բան մը, զոր Զաքարիա ար-

1 Բիւրակն, 1897, էջ 738—39:

2 Կոստանեանց այս տաղին քով կը ծանօթագրէ. «Այս տաղի մէջ արձաճուած են զգացմունքներ այնպիսի խօսքերով, որ կրկնուում են «Ղարի հաւուկ մի եմ բռնած ու բերած ժողովրդական երգի մէջ» (էջ 46): Այս երգն